

կերու բնիկ երկիր կը հռչակուի՝ «միւս կողմէ բոլոր հին աշխարհա-
 գիրները լուսթեամբ կ'անցնին Ռումի (Փոքր Ասիոյ) վրայէն իբր
 արտադրիչ հիւսուածեղէններու եւ գորգերու»⁽⁶⁵⁾։ Եւ առաջին անգամ
 ՔԳ դարուն վերջի քառորդին Վենետիկցի Մարքոյ Բոլոն է որ կը
 յիշէ Գոնիայի, Կեսարիոյ, Սերաստիոյ եւ Երզնկայի հիւսուածեղէն-
 ներուն մասին, շեշտելով որ Կեսարիոյ եւ Սերաստիոյ մէջ գորգեր
 կը շինուէին, աշխարհի ամենաընտիր տեսակէն, եւ նոյն ատեն կ'ա-
 լելցնէ որ անոնց շինողները Հայեր եւ Յոյներ էին։ Իրմէ հազիւ քսան
 եւ հինգ տարի առաջ, 1253-5ին, Ուիլեամ Ռիւպրիք այս երկիրներուն
 բնակչութեան համար կը վկայէ. «Թուրքիոյ մասին պէտք է զիտնաս,
 որ բնակչութեան ոչ իսկ մէկ տասներորդը Սարակինտաներ (իմա մաս-
 մետականներ) են, այլ գրեթէ ամէնքն ալ հայեր եւ յոյներ»⁽⁶⁶⁾։ Դժ-
 ուար թէ այս պերճախօս վիպայութեանց վրայ կարելի ըլլայ աւելի բան
 աւելցնել։ Մարքոյ Բոլոյ որ Չինաստանէն մինչեւ Վենետիկ աշխարհի
 լաւագոյն հիւսուածեղէնները տեսած է, երկու պատճառ միայն կըր-
 նար ունենալ ասիկա ըսելու։ Ասոնցմէ առաջինը, կընար իր տեսած-
 ներուն տեղերուն անունները շփոթած ըլլալ տեսածներուն հետ, եւ
 Հայաստան այլուր տեսած հիւսուածեղէնները շփոթութեամբ Գոնիա-
 յի, Կեսարիոյ կամ Սերաստիոյ վերադրել։ Կամ թէ իրողէս իր յի-
 շած տեղերուն մէջ տեսած էր իր տեսածները։ Ասոնցմէ առաջինը
 աւելի քան անհաւանական է։ Երկրորդը հաւանական է եւ ընդունելի
 անոր համար որ հայկական մեծ գաղութներ Հայաստանէն մեկնած
 էին իրենց իշխաններով եւ թագաւորներով իսկ, գոնէ ՔԱ դարէն ըս-
 կըսած եւ հաստատուած Սերաստիա, Կեսարիա, հաւանաբար Գոնիա
 (դեռ չէ ուսումնասիրուած) եւ մանաւանդ Կիլիկիա, Սիւրիա, մինչեւ
 Եգիպտոս։ Անոնք ոչ միայն գաղթեցին, այլ նաեւ իրենց հետ տարին
 ազգային ճոխ եւ անմասն մշակոյթ մը որ այնքան կարկառուն կերպով
 կ'երեւի գոնէ ճարտարապետութեան, քանդակագործութեան եւ հիւս-
 ուածեղէններու մէջ։

Այս գաղթային պատմութիւնը չէ գրուած դեռ, եւ ցարդ մեր ու-
 նեցած նիւթերը անբաւարար են կատարեալ գաղափար մը տալու
 համար այս գաղթահայտութեան քաղաքական, անտեսական եւ մշակու-
 թային անցեալին մասին։ Սակայն, ինչպէս ըսի, անուբանալի տը-
 լեալներ կը վկայեն ատոնց մեծարժէք գոյութեան։ Անոնք իրենց բար-
 դաւաճ գոյութիւնը պահեցին մինչեւ Երլաբըրմ Պալազիտի եւ Լէնկ-
 թիմուրի պատերազմները։ Թիմուր գրեթէ մահացու հարուած տուաւ
 այս ճոխ գաղութահայտութեան։ Միայն հայ պատմիչները շէն որ ողբ
 ու կական բարձրացուցած կ'եղերերդեն այս շրջանի անցքեր, այլ եւ
 օտար ուղեկիրներ նոյնը կը վկայեն։ Գաաղիլիոյ Լեւոն թագաւորին՝

(65) Oriental rugs... p. 7.

(66) Contemporaries of Marco Polo, p. 207.